

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ  
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

08.07.2017թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 30-ը: Նիստին ներկա էին նաև ԵՊՀ-ի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հրապարակախոս Ա. Հ. Սիմոնյանը, ԵՊՀ-ի Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյանը, ԵՊՀ-ի ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ղեկան՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Վահրամ Դումանյանը, ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի ղեկան մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Պավել Բալայանը, ԵՊՀ ԻՄ-ի ամբիոնի վարիչները և կրթական ծրագրերի ղեկավարները:

Նիստը վարում էր ԵՊՀ-ի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հրապարակախոս Ա. Հ. Սիմոնյանը:

ԵՊՀ-ի ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի 2016-2017 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում:

/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/

2. ԵՊՀ ԻՄ-ի 2018-թ.-ի ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում:  
/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/
3. ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի 2016-2017 ուստարվա գործունեության մասին:  
/Զեկուցող Մ. Ճաղարյան/
4. Ընթացիկ հարցեր:
  - 4.1. ԵՊՀ ԻՄ-ի գիտակազմակերպական բաժնի կանոնակարգի հաստատումը:
  - 4.2. ԵՊՀ ԻՄ-ի միջազգային կապերի բաժնի կանոնադրության հաստատումը:
  - 4.3. ԵՊՀ ԻՄ-ի արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնի կանոնադրության հաստատումը:
  - 4.4. ԵՊՀ ԻՄ-ի արխիվի կանոնադրության հաստատումը:
  - 4.5. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի հաստատումը:
  - 4.6. ԵՊՀ ԻՄ-ում կառուցվածքային փոփոխությունների մասին:
  - 4.7. ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի ասիստենտ Մհեր Օզանեսի Ստեփանյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին:
  - 4.8. ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ս. Աբրահամյանի և ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի ասիստենտ Ս. Հովհաննիսյանի «English for Art Students» ուսումնական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

*Օրակարգի առաջին՝* «ԵՊՀ ԻՄ-ի 2016-2017 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա շնորհակալություն հայտնեց ԵՊՀ-ի ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանին և ԵՊՀ-ի պրոռեկտոր Ա. Կ Գրիգորյանին ԵՊՀ ԻՄ-ի կազմակերպչական աշխատանքներին առավելագույնս աջակցելու համար և ԵՊՀ-ի Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն, Ա. Սադյանին, ԵՊՀ-ի ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան՝ Վահրամ Դումանյանին, ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի դեկան Պավել Բալայանին ԵՊՀ ԻՄ-ի 2016-2017 ուստարվա ամփոփիչ գիտխորհրդի նիստին մասնակցելու համար:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ 2017թ.-ի մայիսի 12-ից հունիսի 25-ը ԵՊՀ ԻՄ-ում ըստ ժամանակացույցի անց է կացվել 2016-2017 ուստարվա ամփոփիչ ատեստավորում առակա և հեռակա ուսուցմամբ: Նշվեց, որ ավարտական աշխատանքների թեմատիկան համապատասխանում էր ներկայացվող ժամանակակից պահանջներին և հնարավորինս վերաբերվում էր տաարածաշրջանային խնդիրներին: Մասնավորապես մայիսի 25-ին Ենոքավանում կայացավ «Կիրառական արվեստ» մասնագիտության ուսանողների ավարտական աշխատանքների պաշտպանությունը, որի հանձնաժողովը գլխավորում է ՀՀ նկարիչների միության նախագահի տեղակալ-քարտուղար, պրոֆեսոր Խաչատուր Սուրենի Ազիզյանը: Աշխատանքներն աչքի էին ընկնում թեմատիկ, ոճական, ժանրային բազմազանությամբ և մեծ մասամբ արժանացան հանձնաժողովի նախագահի ու անդամների դրվատանքին, 8 ուսանող ստացավ «գերազանց», 7-ը՝ «լավ»: «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության ամփոփիչ

ատեստավորման հանձնաժողովը, նախագահ Ռուս-հայկական (սլավոնական), համալսարանի SS դեպարտամենտի ծառայության պետ, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ, Հարություն Վոլոդյայի Գասպարյանի գլխավորությամբ շատ գոհ էին ուսանողների պատրաստվածության մակարդակից, և նշել էին որ նարանք կարող են լրացնել մարզում առակա SS ոլորտի բարձրորոկ կադրերի պակասը:

**«Մերվիս»** մասնագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը գլխավորում էր ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության զարգացման քաղաքականության վարչության պետ Մեխակ Վեմիրի Ապրեսյանը, նրա արտահայտած կարծիքի համաձայն՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը բավարարում է «Մերվիս բակալավր» պատրաստելու պահանջներին և ոլորտում պահանջարկին համապատասխանող կադրեր պատրաստելու զգալի ներուժ ունի: Ամփոփիչ քննության և ավարտական աշխատանքների պաշտպանության հետագա բարելավման ուղղությամբ առաջարկվեց քննարկել այդ գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների առավել արդյունավետ կիրառման և ինովացիոն մոտեցումների ներդրման հնարավորությունը, կատարելագործել հարցաշարերը՝ հաշվի առնելով ոլորտը կարգավորող օրենսդրության մեջ նախատեսվող փոփոխությունները, աշխատանքներում պահպանել ու զարգացնել վերլուծական և պրակտիկ մոտեցումները, առավել ուշադրություն դարձնել դրանց կիրառական կողմին:

**«Տնտեսագիտության տեսություն»** մասնագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը գլխավորում էր ՀՀ Կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի ֆինանսահաշվային վարչության պետ, գլխավոր հաշվապահ Հովիկ Գուրգենի Հովհաննիսյանը: Նա լավ գնահատեց շրջանավարտների մասնագիտական գիտելիքների իմացության մակարդակը, բավարար համարեց ինքնուրույն մտածելու և

արտահայտվելու կարողությունները: Շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքների հետագա բարելավման ուղղությամբ առաջարկվեց բարձրացնել ուսանողների տնտեսագիտական գիտելիքների մակարդակը՝ առավելագույնս նրանց հանձնարարելով տարբեր դասագրքեր և ժամանակակից տնտեսագիտական հոդվածներ ու վերլուծություններ, զարգացնել ուսանողների գործնական հմտություններն ու կարողությունները՝ ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերի համար ինքնուրույն վերլուծություններ կատարելու համար:

**«Անգլերեն լեզու և գրականություն»** մասնագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը գլխավորում էր Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի անգլերեն լեզվի բառագիտության և ոճաբանության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Լիլիթ Ասատուրի Բաղայանը: Հանձնաժողովը բարձր գնահատեց մասնագիտական գիտելիքների իմացության և կիրառման կարողությունները, իրենց մասնագիտության շրջանակներում ինքնուրույն դատողություններ անելու, ազատ հաղորդակցվելու շրջանավարտների կարողությունների և ինքնակրթության հմտությունների դրսևորման մակարդակը: Շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքների հետագա բարելավման ուղղությամբ առաջարկվեց պրակտիկայի համար տրամադրել ավելի լայն հնարավորություններ: Ավարտական աշխատանքների իրականացման և դրանց ներկայացման մակարդակը ևս բարձր գնահատվեց: Հետագա բարելավման ուղղությամբ առաջարկվեց աշխատանքներում պահպանել տեսական և գործնական մասերի հավասարակշռությունը, որպեսզի հնարավորություն տրվի լիարժեք գնահատելու ուսանողների վերլուծական հմտությունները:

**«Ֆրանսերեն լեզու և գրականություն»** մասնագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը գլխավորում էր Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ֆրանսերեն լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Մելանյա Սմբատի Ղազարյանը: Հանձնաժողովը բարձր գնահատեց շրջանավարտների մասնագիտական գիտելիքների իմացության և կիրառման կարողությունների մակարդակը, իրենց մասնագիտության շրջանակներում ինքնուրույն դատողություններ անելու, ազատ հաղորդակցվելու, ինքնակրթության հմտությունների դրսևորման մակարդակը: Ընդգծվեց, որ, ի տարբերություն գործնական ֆրանսերենի, տեսական առարկաների ներկայացումը երբեմն կաղում էր:

Ավարտական աշխատանքների իրականացման հետագա բարելավման ուղղությամբ առաջարկվեց, ցածր կուրսերից սկսած, ուսանողներին ներկայացնել հետազոտական աշխատանք գրելու հիմնական սկզբունքներն ու պահանջները, հետևողական լինել նախապաշտպանությունների նկատմամբ:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ թե անգլերեն, և թե ֆրանսերեն լեզուներով գրված ավարտական աշխատանքները անց են կացվել համապատասխան լեզուներով: Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը կարևորեց նաև արտասահմանյան գրականության առարկայական ծրագրի օպտիմալացումը և տարանջատումը:

**«Մանկավարժություն և հոգեբանություն»** մասնագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը գլխավորում էր Շիրակի «Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի պրոռեկտոր, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սպարտակ Սերյոժայի Սողոյանը:

«Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը լավ գնահատեց մասնագիտական գիտելիքների իմացության, իրենց մասնագիտության շրջանակներում

ինքնուրույն դատողություններ անելու, հաղորդակցվելու շրջանավարտների կարողությունները, բավարար գնահատեց ձեռք բերած գիտելիքների և պատկերացումների կիրառման կարողությունների, ինքնակրթության հմտությունների դրսևորման մակարդակը:

Շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքների հետագա բարելավման ուղղությամբ առաջարկվեց մեծ ուշադրություն դարձնել գործնական հետազոտությունների արդյունքների մշակմանը:

Ավարտական աշխատանքների թեմաների ընտրության վերաբերյալ դարձյալ առաջարկվեց ընտրել տարածաշրջանային հիմնախնդիրների բացահայտմանն ու լուծմանն ուղղված թեմաներ: Մասնավորապես Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ տարածաշրջանում ուսումնասիրության առարկա կարող է լինել Իջևանում գործող Սոս մանկական գյուղը, արտագնա աշխատանքի հետ կապված ընտանեկան խնդիրները, դպրոցներում ներառական կրթության հետ կապված խնդիրները և այլն:

**«Պատմություն»** մասնագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը գլխավորում էր «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, պատմ. գիտ. դոկտոր Համլետ Մարտիկի Գևորգյանը: Հանձնաժողովը լավ գնահատեց մասնագիտական գիտելիքների իմացության և կիրառման, իրենց մասնագիտության շրջանակներում ինքնուրույն դատողություններ անելու, ազատ հաղորդակցվելու շրջանավարտների կարողությունները, ինքնակրթության հմտությունների դրսևորման մակարդակը: Շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքների բարելավման ուղղությամբ առաջարկվեց մասնագիտական կարողությունները զարգացնելու համար առավել խորությամբ ուսումնասիրել

սկզբնաղբյուրները: Ավարտական աշխատանքների հետագա բարելավման հետ կապված՝ շեշտը դրվեց ուսանողների ինքնուրույնության զարգացման վրա, առաջարկվեց ընտրել այնպիսի թեմաներ, որոնք դեռևս պատշաճ մակարդակով ուսումնասիրված չեն:

**«Հայոց լեզու և գրականություն»** մասնագիտության ատեստավորման հանձնաժողովը գլխավորում էր ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դոցենտ, բան. գիտ. թեկնածու Լավրենտի Աշոտի Միրզոյանը: Հանձնաժողովը բավարար գնահատեց շրջանավարտների մասնագիտական գիտելիքների իմացության մակարդակը, իրենց մասնագիտության շրջանակներում ինքնուրույն դատողություններ անելու և հաղորդակցվելու նրանց կարողությունները, ինքնակրթության հմտությունների դրսևորման մակարդակը, բարձր գնահատեց նրանց ձեռք բերած գիտելիքների կիրառման կարողությունները: Ավարտական աշխատանքների վերաբերյալ հանձնաժողովի կարծիքը բարձր էր հատկապես որակավորմանը թեմայի համապատասխանության, մասնագիտական գրականությունից օգտվելու և համադրելու կարողությունների տեսանկյուններից: Աշխատանքների հետագա բարելավման ուղղությամբ առաջարկվեց, որ թեմաները լինեն ժամանակակից, աշխատանքները զերծ լինեն գրքայնությունից ու արտագրություններից, ընդգծվի շրջանավարտի ինքնուրույնությունը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ընդհանուր առմամբ 2017թ. մասնաճյուղում բակալավրի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցմամբ ավարտել են թվով 416 ուսանող, որից 165-ն առկա ուսուցմամբ (1-ը նախորդ տարիներից), 251-ը հեռակա ուսուցմամբ (1-ը նախորդ տարիներից):

Մասնաճյուղում վերոնշյալ կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ 24 ուսանող ստացել են գերազանցության դիպլոմ: Համեմատությամբ կարող



ենք նշել, որ այս տարի առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով գերազանցության դիպլոմ ստացող ուսանողների թիվը աճել է  $\approx 10,8\%$ -ով:

Ստորև աղյուսակի տեսքով, ըստ մասնագիտությունների, ներկայացնում են 2016-2017թթ. շրջանավարտների թիվը: (Տես նաև հավելված 1)

**Շ Ր Ջ Ա Ն Ա Վ Ա Ր Տ Ն Ե Ր**

	Մասնագիտություն	Ընդամենը՝ 416, այդ թվում նախորդ տարիներից /2/			
		առկա /գերազ. դիպլոմ/		հեռակա	
		2017	2016	2017	2016
1	Կիրառ. մաթեմ. և ֆիզիկա	-	-	22/0	19/0
2	Բնապահպ. և բնօգտ.	-	-	42/0	30/0
3	Ինֆորմ. և կիրառ. մաթեմատիկա	21/1	-	-	-
4	Տնտեսագիտ. տեսություն	21/2	35/3	58/0	30/0
5	Սերվիս	14/6	18/3	19/0	-
6	Պատմություն	18/4	23/4	39/0	32/0
7	Հայոց լեզու և գրակ.	18/1	25/0	33/0	20/0
8	Մանկ. և հոգեբանություն	19/3	8/1	38/0	30/0

9	Ֆրանս. լեզու և գրակ.	10/1	9/2	-	-
10	Անգլերեն լեզու և գրակ.	29/6	24/3	-	-
11	Կիրառական արվեստ	15/0	34/5	-	-
<b>ԸՆԴԱՄԵՆԸ՝</b>		<b>165/24</b>	<b>189/21</b>	<b>251/0</b>	<b>161/0</b>

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ այս տարի շրջանավարտների հարցումը առաջին անգամ անց է կացնել առցաց, և հույս հայտնեց, որ ստացված տվյալները առավել օբյեկտիվ են, նշեց նաև, որ 31 շրջանավարտներ ցանկություն են հայտնել ընդունվել մագիստրատուրա, որից 14-ը այս պահի դրությամբ արդեն ընդունվել են, մյուս մասն էլ հույս ունենք նույնպես կընդունվեն: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ստացած կրթությունից 2016-2017 ուստարվա շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքները տես հավելված 2:

### ***Որոշեցին***

#### **Որոշում 25/1**

##### **1. Ընդունել ի գիտություն**

***Օրակարգի երկրորդ՝*** «ԵՊՀ ԻՄ-ի 2018-թ.-ի ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ այս տարի 2016թ.-ին Տավուշի մարզում եղել է 1253 շրջանավարտ, 2017թ.-ին՝ 920, 2018թ.-ին՝ 522, որից կարելի է եզրակացնել, որ մյուս տարի դիմորդների քանակը կտրուկ իջնելու է, և այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է 2018թ.ի համար ընտրել ճիշտ մասնագիտություններ

հնարավորիս շատ դիմորդներ ապահովելու համար: Հստակ է այն որ կիրառական արվեստի ֆակուլտետում ընդունելություն կատարվելու է դիզայնի կրթական ծրագրով, բնական գիտությունների ֆակուլտետում՝ ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկայի կրթական ծրագրով, տնտեսագիտական ֆակուլտետում՝ ֆինանսներ(ըստ ոլորտների) կրթական ծրագրով, հումանիտար գիտությունների ֆակուլտետում՝ անգլերեն լեզու և գրականություն ու տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություններով: Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Իջևան քաղաքի 80 շրջանավարտներից 22-ը դիմել են Երևանի պետական բժշկական համալսարան, մյուս կողմից մարզում կա նաև դեղատներում մասնագետ աշխատողների կարիք՝ կարելի է եզրակացնել, որ մարզում կարող է լինել դեղագործական քիմիա կրթական ծրագրով սովորել ցանկացողների որոշ քանակություն, սակայն այդ մասնագիտությամբ ուսուցում կազմակերպելը ենթադրում է հարուստ լաբորատորիաներ, որի համար ԵՊՀ ԻՄ-ը ունի ԵՊՀ-ի աջակցության կարիքը:

Մյուս կողմից պարզվել է, որ մարզում կա նաև ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչների կարիք, Տավուշի մարզում ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչների միջին տարիքը 50-ից բարձր է, սակայն առանձին այդպիսի կրթական ծրագիր իրականացնելը դժվար կլինի, այն կարելի է իրականացնել պետպատվերի շրջանակներում, նախարարության հետ համագործակցելով, ինչպես նաև կարելի է իրականացնել անգլերեն լեզու և գրականության կամ ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտություններին զուգահեռ: Հեռանկարներ կան նաև զբոսաշրջության ոլորտում՝ կառավարության կողմից իրականացվող մի շարք ծրագրերի արդյունքում ակնկալվում է Տավուշի մարզ զբոսաշրջիկների թվի պարբերական աճ, որն էլ իր հերթին ենթադրում է այդ մասնագիտությամբ սովորել ցանկացողների թվի աճ: Նշվեց, որ կան հեռանկարներ նաև հանրային

կառավարման ոլորտում: Ամփոփելով ելույթը ԵՊՀ ԻՄ-ի տնօրենը նշեց, որ մասնաճյուղը մրցակցային կրթական ծրագրերով լիարժեք համալսարանական կրթությունն ապահովվելու նպատակով ակնկալում է ԵՊՀ –ի լիարժեք աջակցությունը:

*Արտահայտվեցին* –ԵՊՀ ԻՄ-ի Տարրական մանկավարժություն և մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների դոկտոր Վ. Բրուտյանը, ԵՊՀ-ի Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սադյանը, ԵՊՀ-ի ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Վահրամ Դումանյանը, ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի դեկան մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Պավել Բալայանը, ԵՊՀ-ի պրոռեկտոր Ա. Գրիգորյանը:

Վ. Բրուտյանը նշեց, որ սոցիալական աշխատանք կրթական ծրագրը նպատակահարմար է իրականացնել մեծ քաղաքներում, մեր տարածաշրջանում դրա փոխորեն ավելի նպատակահարմար կլինի իրականացնել սոցիալական մանկավարժություն կրթական ծրագիրը, որի համապատասխան շրջանավարտները կարող են աշխատել մարզի դպրոցներում, մանկապարտեզներում, Սոս մանկական գյուղում և այլուր, մյուս կողմից Վ. Բրուտյան կարծիք հայտնեց, որ այս տարածաշրջանում դեղագործական քիմիան չի աշխատի: Նա ասաց նաև, որ ժամանակն է ԵՊՀ ԻՄ-ում ունենալու մանկավարժության ֆակուլտետ, ինչպես նաև իրականացնել կարճաժամկետ դպրոցական մանկավարժության մագիստրատուրայի կրթական ծրագիր, որի անհրաժեշտ կադրային բազան ԵՊՀ ԻՄ-ը ունի:

ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի դեկան մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Պավել Բալայանը նշեց, որ ռուսաց լեզվի

հետ կապված դեռ ամեն ինչ պարզ չէ, մշակվում է օտար լեզուների դասավանդման հայեցակարգ:

ԵՊՀ-ի ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Վահրամ Դումանյանն իր գոհունակությունն հայտնեց ներկայացված արդյունքների վերաբերյալ և նշեց, որ այն արդյունքն է կատարված բարեխիղճ աշխատանքի:

ԵՊՀ-ի Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սադյանը նշեց, որ ԵՊՀ-ի ֆարմացիայի ինստիտուտը ԱՊՀ-ում լավագույնն է իր տեսակի մեջ, կան հովանավորներ, համագործակցում ենք տարբեր կազմակերպությունների հետ, կան բոլոր անհրաժեշտ ժամանակակից սարքավորումները և մասնագետները ֆարմակալոգիայի բնագավառում եվրոմակարդակով կրթություն ապահովելու համար, մեր շրջանավարտները աշխատաշուկայում գրավել են իրեց դիրքը և ԵՊՀ-ի ֆարմացիայի ինստիտուտը պատրաստ է ԵՊՀ ԻՄ-ին աջակցել այս ուղղվածությամբ կրթական ծրագիր իրականացնելու գործում:

ԵՊՀ-ի պրոռեկտոր Ա. Գրիգորյանը համառոտ անդրադարձավ բոլոր առաջադրված խնդիրներին: Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ ընդունելության մասնագիտությունների ցանկը լինելու է դինամիկ և պետք է առավելագույնս համապատասխանի մարզի աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին, և ենթադրվում է, որ 2018թ.-ին ԵՊՀ ԻՄ-ում ընդունելությունը կիրականացվի 6 կրթական ծրագրերով: Նա նշեց, որ լավ կլինի եթե լեզվի գծով կարողանանք տալ երկու մասնագիտական որակավորում: Դեղորայքային քիմիա կրթական ծրագրի հետ կապված եղել են քննարկումներ ԵՊՀ –ում և ԵՊՀ ԻՄ-ում և դա մենք կարող ենք կազմակերպել մասնաճյուղում ԵՊՀ –ի աջակցությամբ: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը նշեց, որ կարելի քննարկել նաև սոցիալական աշխատանք և սոցիալական մանկավարժություն կրթական ծրագրերի հարցը, իսկ մասնաճյուղում մագիստրատուրան նպատակահարմար չէ, ԵՊՀ-ն տալիս

Է մասնաճյուղի շրջանավարտներին լավ հնարավորություններ ԵՊՀ-ում մագիստրատուրա սովորելու հարցում, իսկ ինստիտուցիոնալ հավատարմագրում մասնաճյուղը 2011թ.-ին անցել է ԵՊՀ –ի հետ միասին: Նշեց նաև, որ 2018թ.-ից սկսած ամփոփիչ ատեստավորման քննությունները չեն լինելու, մնալու է միայն ավարտական աշխատանքները, և պետք է կենտրոնանալ դրա վրա, մասնավորապես ԵՊՀ-ում մշակվում է բակալավրի կրթական ծրագրով ավարտական աշխատանքների կատարման և պաշտպանության կարգ: Պետք է բարձրացնել ավարտական աշխատանքների ղեկավարների պարտականությունները և հարցման միջոցով պարզել ուսանողների բավարարվածությունը ավարտական աշխատանքների կատարման ընթացքից: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը կարևորեց նաև ԵՊՀ-ում գործող ինտրանետ համակարգի ներդրումը ԵՊՀ ԻՄ-ում, ուսանողներին էլեկտրոնային հասցեների տրամադրումը ԵՊՀ պորտալում, ինչպես նաև պետք է աշխատել նվազագույնի հասցնել թղթարարությունը՝ դրաք հնարավորինս կատարելով առցաց: Նա հավելեց, որ ԵՊՀ –ի և ԵՊՀ ԻՄ-ի հարցման արդյունքները նման են, կան շատ ընդհանրություններ օտար լեզուների, պրակտիկաների կազմակերպան, գործնական հմտությունների գնահատման արդյունքներում: Պրակտիկաների կազմակերպման խնդիրը գոյություն ունի ամբողջ ՀՀ-ում, չկա այդ բնագավառը կարգավորող որևէ գործող իրավական ակտ: Ելույթի վերջում պրոռեկտոր Ա. Գրիգորյանը ԵՊՀ ԻՄ-ի կատարած աշխատանքը գնահատեց բարձր:

Այնուհետև ԵՊՀ-ի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հրապարակախոս Ա. Հ. Սիմոնյանը իր գոհունակությունն հայտնեց ԵՊՀ ԻՄ-ի կրթական գործունեությունից և անդրադառնալով դոկտոր Վ. Բրուտյանի առաջարկին մանկավարժական ֆակուլտետ ունենալու հետ կապված, ասաց, որ համալսարանի կառուցվածքում դա չի պատկերացնում, այնուհետև նշեց, որ ժամանակակից համալսարանական աշխարհի զարգացման հիմնական միտումներից մեկը

գերազանցության կենտրոնների ստեղծումն է, որտեղ ակումուլյացիա են անում և լավագույն աշխատուժի, և լավագույն գիտակրթական ծրագրերի, և նորարարության, ընդ որում ԵՊՀ –ում արդեն կան մի քանի այդպիսի կենտրոններ և ավելին, ԵՊՀ-ն անցել է դրա հաջորդ էտապին և ԵՊՀ –ում ստեղծում ենք կլաստերներ, որի վառ ապացույցը ֆարմացիայի ինստիտուտն է: Գերազանցության կենտրոնները ֆակուլտետների հետ կապելով, ֆակուլտետներն էլ կապում են ակադեմիական ինստիտուտի հետ, ակադեմիական ինստիտուտը՝ արտադրության հետ, որն էլ համագործակցում է մեր միջազգային գործընկերների հետ, մասնավորապես ԵՊՀ-ի ֆարմացիայի ինստիտուտի մի մասնկիցն էլ Բելգորոդի համալսարանն է: ԵՊՀ ռեկտոր Ա. Միմոնյանը նշեց, որ ՀՀ-ում այսպիսի կլաստերներ մի քանի հատ են և ԵՊՀ-ն առաջիկայում կարող է ստեղծել մի քանի նմանատիպ կլաստերներ:

ԵՊՀ ռեկտոր Ա. Միմոնյանը անդրադառնալով առաջիկայում դիմորդների նվազելուն, նշեց, որ դա հանգեցնելու է համալսարանի դրամական հնարավորությունների նվազմանն, և որպեսզի համալսարանում չլինեն համատարած կրճատումներ նախատեսվում է աշխատուժի ժառանգականության սահուն ապահովում՝ մեծերից երիտասարդներին, ապահովվել աշխատուժին լրացուցիչ աշխատանքներով որակավորման և վերավորակավորման միջոցով: Նշվեց նաև, որ խնդիր կա նաև քննությունների հետ կապված, պետք է փոխել մոտեցումները, շեշտը պետք է դրվի ավելի շատ ուսանողի ստեղծած գիտելիքի գնահատման վրա, ավարտական աշխատանքներում պետք է գնահատվի թիմային աշխատանքը և աշխատանքի ներդրումային հնարավորությունը:

Ռեկտոր Ա. Միմոնյանը նշեց, նաև որ ԵՊՀ –ում ուսանողների համար նախատեսված կա 3 (երեք) հատ ստարտափ լաբարատորիա, լավ կլինի, որ մասնաճյուղում գոնե մեկը ունենանք: Այնուհետև անդրադառնալով

պրակտիկաների կազմակերպմանը, ԵՊՀ ռեկտոր Ա. Միմոնյանը նշեց, որ այդ ուղղությամբ պետք է ներդրումներ կատարվեն:

## *Որոշեցին*

### Որոշում 25/2

1. Ընդունել ի գիտություն:

Օրակարգի էրրորդ՝ «ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի 2016-2017 ուստարվա գործունեության մասին» հարցի վերաբերյալ լսվեց ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանի հաղորդումը:

ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյան մասնավորապես նշեց, որ որակյալ ուսումնառության ապահովման ռազմավարական խնդրի իրականացման գրավականը մասնաճյուղում դեռևս 2009թ.-ից կայուն ներդրված **որակի ներքին ապահովման համակարգն է:** ԵՊՀ ԻՄ-ի որակի ներքին ապահովման կազմակերպական կառուցվածքին համապատասխան՝ այդ գործընթացները կանոնակարգվում և իրականացվում են Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժնի կողմից՝ Որակի կառավարման հանձնաժողովի մշտական աջակցությամբ և խորհրդատվությամբ:

Նախորդ ուստարում բաժինը կարելի է ասել ամբողջությամբ իրականացրել էր իր առջև դրված խնդիրները, ինչի մասին ուստարվա վերջում հաշվետվությամբ ներկայացվել է, և բաժնի գործունեությունը գնահատվել բավարար:

Բաժինն ընթացիկ ուստարում առաջնորդվում է կրթության որակի բնագավառում մասնաճյուղի ընտրած քաղաքականությամբ և բաժնի՝ 2016-17 ուստարվա աշխատանքային պլանով, որը կազմվել է համաձայն մասնաճյուղի զարգացման 2016-20 ռազմավարական ծրագրի պլան-ժամանակացույցից բխող կարճաժամկետ պլանի: Հաշվետվությունը ամբողջությամբ ներկայացված է հավելված 3-ում:



**Արտահայտվեցին** – ՌԻՄՎ պետ Ա.Յ. Դավթյանը, հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Զուրաբյանը և այլոք:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին ներկայացված ելույթին և առաջարկեցին բաժնի գործունեություն գնահատել լավ:

### **Որոշեցին**

Որոշում 25/3

ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի գործունեությունը գնահատել լավ:

### **Ընթացիկ հարցեր:**

**4.1 Լսեցին** – «ԵՊՀ ԻՄ-ի գիտակազմակերպական բաժնի կանոնակարգի հաստատումը» հարցի մասին:

### **Որոշեցին**

Որոշում 25/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտակազմակերպական բաժնի կանոնակարգը՝ համաձայն հավելված 4-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**4.2 Լսեցին** – «ԵՊՀ ԻՄ միջազգային կապերի բաժնի կանոնադրության հաստատումը» հարցի մասին:

## ***Որոշեցին***

### **Որոշում 25/5**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի միջազգային կապերի բաժնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 5-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**4.3 Լսեցին** -«ԵՊՀ ԻՄ-ի արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնի կանոնադրության հաստատումը» հարցի մասին:

## ***Որոշեցին***

### **Որոշում 25/6**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնի կանոնադրությունը(նոր խմբագրությամբ)՝ համաձայն հավելված 6-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2017թ. փետրվարի 11-ի թիվ 22

նիստում հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնի կանոնադրությունը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**4.4 Լսեցին** -«ԵՊՀ ԻՄ-ի արխիվի կանոնադրության հաստատումը» հարցի մասին:

*Որոշեցին*

Որոշում 25/7

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի արխիվի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 7-ի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**4.5 Լսեցին** -«Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի հաստատումը» հարցի մասին:

*Որոշեցին*

Որոշում 25/8

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի

կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը՝ համաձայն հավելված 8-ի:
2. Սահմանել, որ կանոնակարգի 9-րդ կետով սահմանված՝ ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման մրցույթի պայմանները կիրառվելու են 2017-2018 ուսումնական տարվա ավարտից հետո անցկացվող մրցույթի պահից սկսած:
3. Ուժը կորցրած ճանաչել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2016թ. ապրիլի 2-ի թիվ 15 նիստում հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը:

**4.6 Լսեցին** -«ԵՊՀ ԻՄ-ում կառուցվածքային փոփոխությունների մասին» հարցի վերաբերյալ:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի աշխատակազմի հետ տարվող գործունեությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է Անձնակազմի կառավարման բաժինը վերակազմավորել Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի:

Այնուհետև ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը առաջարկեց ԵՊՀ ԻՄ-ի անձնակազմի կառավարման բաժինը Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին վերակազմավորելու առաջարկով դիմել ԵՊՀ-ի ռեկտորին:

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 2-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ ԵՊՀ ԻՄ-ի անձնակազմի կառավարման բաժինը Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին վերակազմավորելու վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի առաջարկին:
2. Համապատասխան առաջարկով դիմել ԵՊՀ ռեկտորին:

**4.7 Լսեցին** - « ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի ասիստենտ, ՀՀ նկարիչների միության անդամ Մհեր Օգանեսի Ստեփանյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի 2017թ. մարտի 26-ի թիվ 5 նիստում քննարկվել է նույն ամբիոնի ասիստենտ, ՀՀ նկարիչների միության անդամ Մհեր Օգանեսի Ստեփանյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի ասիստենտ, ՀՀ նկարիչների միության

անդամ Մհեր Օզանեսի Ստեփանյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈՀ:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի ասիստենտ, ՀՀ նկարիչների միության անդամ Մհեր Օզանեսի Ստեփանյանը ԵՊՀ ԻՄ-ում 2006թ. -ից սկսած անընդմեջ իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն: Նա Ռուսաստանի նկարիչների կազմակերպության անդամ է 1999թ.-ից, ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներքո նկարիչների կազմակերպության անդամ է 1998թ.-ից, ՀՀ նկարիչների միության անդամ է 1997թ.-ից սկսած: ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի ասիստենտ, ՀՀ նկարիչների միության անդամ Մհեր Օզանեսի Ստեփանյանը մասնակցել է առնվազն 41 խմբային ցուցահանդեսների, որից 13-ը՝ 2013թ.-ից հետո, 10-ը ցուցահանդեսի մասնակցել է արտասահմանում: Մհեր Օզանեսի Ստեփանյանը ունի առնվազն 9 անհատական ցուցահանդեսների մասնակցություն, որից 4-ը կայացել է Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում, 1998-2002թթ. Գերմանիայի Ախեն քաղաքում մասնակցել է ցուցահանդես վաճառքի: Նա 2002թ. , 2003թ., 2004թ. մասնակցել է Մոսկվայում կայացած մրցութային միջազգային ցուցահանդեսներին, 2013թ.-ին մասնակցել է ՀՀ նկարիչների միության կողմից կազմակերպված ՀՀ Պետական մրցանակի ներկայացված աշխատանքների ցուցահանդեսին:

Նա 2000թ. ին ՌԴ-ի մշակույթի կոմիտեի կողմից կազմակերպված «Ոսկե վրձին» հոբելյանական մրցութային ցուցահանդեսում արժանացել է պատվավոր դիպլոմի:

Նա աչքի է ընկնում մասնագիտական աշխատանքների հարուստ փորձով և արհեստավարժությամբ, նրա դասախոսական աշխատանքը բնութագրվում է բարձր մակարդակով և նյութի մատուցման հմտությամբ, ինչը մեծապես խթանում է ուսանողների իմացական հետաքրքրությանը:

Նա համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի դ. ենթակետի, որը նախատեսում է դոցենտի գիտական կոչում շնորհել «մշակույթի և սպորտի ասպարեզում դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձանց» կարող է հավակնել դոցենտի գիտական կոչման:

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի ասիստենտ, ՀՀ նկարիչների միության անդամ Մհեր Օզանեսի Ստեփանյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար և կարելի է միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին:

Այնուհետև Ս. Ա. Առաքելյանը քվեարկության դրեց Մհեր Օզանեսի Ստեփանյանի դոցենտի գիտական կոչում շնորհելու համար երաշխավորելու և ԵՊՀ գիտխորհրդի միջնորդությանը դիմելու հարցը:

***Որոշեցին***

Որոշում 25/10

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի ասիստենտ, ՀՀ նկարիչների միության անդամ Մհեր Օզանեսի Ստեփանյանի գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում

գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի դ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի ասիստենտ, ՀՀ նկարիչների միության անդամ Մհեր Օգանեսի Ստեփանյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի ասիստենտ, ՀՀ նկարիչների միության անդամ Մհեր Օգանեսի Ստեփանյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈՀ:

**4.8 Լսեցին** – «ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ս. Աբրահամյանի և ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի ասիստենտ Ս. Հովհաննիսյանի «English for Art Students» ուսումնական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին» հարցի վերաբերյալ:

ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի 2017թ. մայիսի 26 –ի թիվ 14 նիստում որոշում է կայացվել դիմել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ս. Աբրահամյանի և ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի ասիստենտ Ս. Հովհաննիսյանի «English for Art Students» («Անգլերենը արվեստի բաժնի ուսանողների համար») ուսումնական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու համար: Ձեռնարկը գրված է անգլերեն



լեզվով, գրախոսվել է «Անգլերեն լեզու և գրականություն» ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ Ք. Մ. Հարությունյանի և ԵՊՀ-ի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ս. Ռ. Խասապետյանի կողմից և արժանացել է բարձր գնահատականի:

***Արտահայտվեց*** – Հումանիտար գիտությունների ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ Ք. Մ. Հարությունյանը:

Նա նշեց, որ ձեռնարկը նախատեսված է կիրառական արվեստի բաժնի ուսանողների և արվեստով հետաքրքրվողների համար: Այն նպատակ ունի խորացնել ուսանողների լեզվական գիտելիքները, հարստացնել մասնագիտական բառապաշարը, զարգացնել նրանց հաղորդակցական հմտությունները բանավոր և գրավոր խոսքում:

Ձեռնարկը բաղկացած է 17 դաս-բաժիններից (Lessons): Յուրաքանչյուր բաժին ընդգրկում է արվեստի մի դարաշրջան: Ամեն բաժին բաղկացած է մասնագիտական տեքստից և վարժություններից: Վերջում տրված է բառարան:

### ***Որոշեցին***

Որոշում 25/11

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 13-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել հրատարակման ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության

ամբիոնի դասախոս Ս. Աբրահամյանի և ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի ասիստենտ Ս. Հովհաննիսյանի «English for Art Students» ուսումնական ձեռնարկը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ \_\_\_\_\_ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար \_\_\_\_\_ Մ. Ս. ԱԹՈՅԱՆ